



Աշխատություն 06(07), Հունիս 2007, Երևան, Հայաստան  
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)

---

# Աղքատության գնահատման մեթոդաբանությունը Հայաստանում

Մուշեղ Թումասյան

*Սույն հոդվածն ամփոփ կերպով ներկայացնում է Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը, որը կիրառվում է ՀՀ ԱՎԾ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության արդյունքների հիման վրա: Հոդվածի հրապարակումը իրականացվել է Օքսֆամ ՄԲ աջակցությամբ:*

## Աղքատության գնահատման մեթոդաբանությունը Հայաստանում

### Աղքատության գնահատման ընդհանուր մոտեցումները

Հայտնի է, որ աղքատությունը տարբեր դրսևորումներ և սահմանումներ ունի: Գրականության մեջ ընդունված և տարածված են «Եկամտային աղքատություն» և «Մարդկային աղքատություն» հասկացությունները: Առաջինը վերաբերվում է մարդու առաջնային պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ սպառման կարողությանը կամ, այլ կերպ ասած, նյութական բարեկեցության մակարդակին: «Մարդկային աղքատություն» առավել լայն հասկացություն է և կապվում է մարդկային արժանապատիվ կյանք վարելու և մարդկային զարգացման հնարավորությունների հետ, իր մեջ ներառելով՝ կրթական, առողջապահական, տեղեկատվական և այլ սոցիալական պահանջմունքների բավարարման հնարավորությունները և ներուժը:

«Եկամտային աղքատության» գնահատման համար եկամուտների (կամ սպառման) մակարդակը համեմատվում է համապատասխան հաշվարկային մեծության (աղքատության գիծ) հետ: Ընդհանրապես, հատկապես զարգացող երկրներում, վիճակագրական հետազոտությունների միջոցով եկամուտների մակարդակի գնահատման մեծ դժվարություններ կան: Հետազոտություններում ընդգրկված տնային տնտեսությունները հակում ունեն թաքցնել եկամուտները, կամ եթե անհրաժեշտաբար պարտադրված չէ՝ պարզապես չհայտարարել դրանք: Այս դժվարությունները եկամուտներին վերաբերող տվյալների արժանահավատության և որակի խնդիրներ են առաջացնում՝ արդյունքում նվազեցնելով ողջ հետազոտության արժանահավատությունը և որակը: Սրանից խուսափելու համար, սովորաբար կիրառվում է աղքատության գնահատման ծախսային մեթոդը: Այսինքն, սահմանված նվազագույն մեծության (աղքատության գիծ) հետ համեմատվում են ոչ թե եկամուտները, այլ սպառումը:

Ըստ եռության այս մոտեցումը լիովին համապատասխանում է եկամտային աղքատության սահմանմանը, քանի որ վերջինս վերաբերում է մարդու փաստացի, առկա բարեկեցության մակարդակին: Այս իմաստով, տեսականորեն, անկախ եկամուտների կամ ակտիվների մակարդակից, եթե դրանք չեն սպառվում սեփական (նյութական) պահանջմունքների բավարարման համար, ապա մարդիկ կամ տնային տնտեսությունները կարող են լինել աղքատ:

Այսպիսով, Հայաստանում և աշխարհի մի շարք այլ երկրներում աղքատության գնահատման հիմքում տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտություններն են, որոնց միջոցով հավաքագրվում են տվյալներ եկամուտների, ծախսերի և այլ ցուցանիշների վերաբերյալ:

Սպառման (կամ ծախսերի) մեթոդով աղքատության գնահատման համար, հավաքագրված տվյալների ամփոփման միջոցով հաշվարկվում է տնային տնտեսության ընթացիկ սպառման մեծությունն արտահայտող սպառման ազդեցատը: Վերջինս համեմատվում է աղքատության ընդհանուր գծի՝ պարենային և ոչ պարենային ապրանքների նվազագույն անհրաժեշտ սպառման հաշվարկային մակարդակի հետ: Այն տնային տնտեսությունները (կամ մարդիկ), որոնց սպառման մակարդակը ցածր է Աղքատության ընդհանուր գծից համարվում են աղքատ, իսկ եթե սպառումը ցածր է սահմանված «Պարենային աղքատության գծից»՝ համարվում են ծայրահեղ աղքատ:

Աղքատության գնահատման համար կարելի է կիրառել նաև այլ մոտեցումներ՝ օրինակ ըստ ակտիվների մակարդակի, կամ էլեկտրաէներգիայի սպառման մակարդակի և այլն:

Աղքատության գնահատման համար կիրառվում են նաև սուբյեկտիվ գնահատումների մեթոդը: Աղքատությունը հարաբերական հասկացություն է, ուստ և, եթե տվյալ մարդը համեմատելով իր նյութական վիճակը և հնարավորությունները գտնում է, որ ինքը աղքատ է, ապա դա պետք է ընդունել:

### Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտությունները

Հայաստանում աղքատության և դրա տարբեր դրսևորումների գնահատման մի շարք հետազոտություններ են իրականացվում: Այնուհանդերձ, ՀՀ ԱՎԾ «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտությանը» ամենաընդգրկուն է, որի հիման վրա տրվում են երկրում աղքատության պաշտոնական գնահատականները: Այս վիճակագրական ընտրանքային հետազոտությունների իրականացումը Հայաստանում սկսվել է դեռևս 1996 թվականից, իսկ արդեն 2001 թվականից դրանք պարբերական (ամենամյա) բնույթ ունեն:

Այս հետազոտության մեթոդոլոգիան, հայտարարված է, որ համապատասխանում է միջազգային պրակտիկային, ընդ որում Համաշխարհային բանկը պարբերաբար աջակցություն է ցուցաբերում ՀՀ ԱՎԾ-ին՝ մեթոդաբանության բարելավման/զարգացման և միջազգային արդի չափանիշներին առավել համապատասխանեցման առումներով:

ՀՀ ԱՎԾ նշված հետազոտությունները բավականին ընդգրկուն տեղեկատվություն են պարունակում տնային տնտեսությունների և նրանց անդամների վերաբերյալ: Թեև դրանք մանրակրկիտ տվյալներ են պարունակում տնային տնտեսությունների թե՛ եկամուտների և թե՛ ծախսերի վերաբերյալ, այնուհանդերձ ընդունված է, որ դրանք առավել շատ ծախսերի գնահատման, քան թե եկամուտների գնահատման հետազոտություններ են:

Յուրաքանչյուր հետազոտության ընթացքում, տվյալների հավաքագրման պրոցեսը տևում է 12 ամիս, ընդ որում յուրաքանչյուր ամիս տնային տնտեսությունները ենթարկվում են ռոտացիայի: Յուրաքանչյուր տնային տնտեսությունում տվյալների հավաքագրումը իրականացվում է 1 ամսվա ընթացքում: Տվյալների հավաքագրման համար կիրառվում են երկու գործիքներ՝ տնային տնտեսությունների հետազոտության հարցաթերթը և օրագիրը: Ըստ մեթոդաբանության, հարցաթերթը լրացվում է տվյալ ամսվա ընթացքում նույն տնային տնտեսություն 5 առանձին այցելությունների ընթացքում, իսկ օրագիրը լրացվում է տնային տնտեսության կողմից՝ տվյալ ամսվա ընթացքում ամեն օր:

Հետազոտության տվյալները, որպես կանոն ներկայացուցչական են ամբողջ երկրի, մայրաքաղաք Երևանի, ընդամենը բոլոր քաղաքների և ընդամենը բոլոր գյուղերի մակարդակներում: Ըստ տարիների հետազոտության ընտրանքի ծավալը և ընտրանքում ընդգրկված բնակավայրերի թվաքանակը էապես փոխվել է: Ուստի համարվում է, որ վերջին (2004 և 2005 թվականների) հետազոտությունները համադրելի են միայն 1998/99 թվականների<sup>1</sup> հետազոտության հետ:

	1996	1998/99	2001	2002	2003	2004	2005
Ընտրանքի փաստացի ծավալը	4920	3600	4037	4634	4641	6816	5187
Ընտրանքում ընդգրկված բնակավայրերի քանակ	128	104	47	44	37	259	119
Քաղաքային բնակավայրեր	28	33	19	14	17	43	28
Գյուղական բնակավայրեր	100	71	28	30	20	216	91

<sup>1</sup> 1998/99 թվականների հետազոտությունը իրականացվել է 1998 թվականի հուլիսի 1-ից մինչև 1999 թվականի հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում, իսկ 1996 թվականի հետազոտությունը իրականացվել է նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը: Մյուս բոլոր հետազոտությունները իրականացվել են 1 տարվա ընթացքում:

Այսպիսով, Հայաստանում աղքատության մակարդակի և միտումների պաշտոնական գնահատականները և աղքատության հաղթահարմանն ուղղվող քաղաքականությունները և ծրագրերը (մասնավորապես՝ ԱՅԴԾ) հիմնվում է ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ վիճակագրական ընտրանքային հետազոտությունների վրա: Վերջինիս միջոցով հավաքագրված տվյալները ամփոփվում են և գնահատվում է «Եկամտային աղքատության» մակարդակը՝ կիրառելով վերոհիշյալ սպառման մեթոդը:

### Սպառման ագրեգատի որոշումը

Ինչպես աղքատության գծերի հաշվարկը, այնպես էլ սպառման ագրեգատի գնահատումը չափազանց կարևոր են աղքատության մակարդակի որոշման առումով: Վերջին տարիներին Հայաստանում ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ հետազոտության մեթոդաբանությունը, մասնավորապես սպառման ագրեգատի հաշվարկման, մեթոդաբանությունը փոփոխվեց: Արդեն 2004 և 2005 թվականների հետազոտություններում սպառման ագրեգատը մեկ շնչի հաշվով հաշվարկվում է ըստ չափահաս անդամների համարժեքության և մասշտաբից տնտեսման գնահատականների: Այս մոտեցումները, վերջին տարիներին գրականությունում, լայն տարածում են ստացել, և հիմնվում են հետևյալ ենթադրությունները վրա: Նախ, Էմպիրիկ հետազոտությունները պարզել են, որ երեխաների սպառման պահանջները ավելի փոքր են քան չափահասներինը: Երկրորդ՝ նույն մեկ շնչի հաշվով եկամտի պայմաններում տնային տնտեսությունների բարեկացությունը կարող է տարբերվել կախված տնային տնտեսությունների անդամների թվաքանակից:

Այսպիսով, տնային տնտեսության համար մեկ շնչի հաշվով սպառման ագրեգատն որոշելիս պարնային և ոչ պարնային ապրանքների սպառմանը ուղղված դրամական և ոչ դրամական ծախսերը հարաբերվում է մեկ չափահասին համարժեք անդամների թվաքանակին, վերջինս ճշգրտելով մասշտաբից տնտեսման ցուցիչով: Ներկայում, չափահասի համարժեքության գործակիցը գնահատել է 0.65<sup>2</sup>: Այսինքն, գնահատված է, որ երեխաների (մինչև 14 տարեկան) սպառման պահանջները կազմում են չափահասների սպառման պահանջների 65 տոկոսը: Հետազոտություններում, տնային տնտեսության չափահասին համարժեք անդամների թվաքանակը գնահատելու համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝  $NC=(N+0.65*C)$ , որտեղ՝

NC- չափահասին համարժեք անդամների թվաքանակն է,

N- 14 տարեկանից բարձր անդամների թվաքանակն է,

C- մինչև 14 տարեկան անդամների թվաքանակն է:

Միաժամանակ կիրառվում է նաև մասշտաբից տնտեսման ցուցիչը, որի ճկունությունը գնահատված է 0.87 աստճան: Մասշտաբից տնտեսումը տեղի է ունենում, քանի որ առանձին դեպքերում անդամների քանակի ավելացումը համարժեքորեն չի ավելացնում սպառման ծախսերը: Օրինակ՝ մեկ անդամ ունեցող և 3 անդամ ունեցող տնային տնտեսությունների երկրաժամկետ օգտագործման և այլ ապրանքների ու ծառայությունների սպառումը գրեթե նույնն է (օրինակ՝ սառնարանի, հեռուստացույցի, ավտոմեքանայի, լրագրերի և այլի հետ կապված ծախսեր), իսկ առանձին ապրանքների և ծառայությունների սպառման ծախսերը տնտեսվում են:

Այսպիսով, յուրաքանչյուր տնային տնտեսության համար մեկ շնչի հաշվով սպառման ագրեգատը որոշվում է հետևյալ բանաձևով:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Երևան 2006

$CA = C/(NC^{0.87})$ , որտեղ՝

CA- մեկ շնչի (չափահասի) հաշվով սպառման ագրեգատն է,

C-տնային տնտեսության կողմից ընդամենը պարենային և ոչ պարենային ապրանքների սպառմանը ուղղված դրամական և ոչ դրամական ծախսերն են,

NC- չափահասին համարժեք անդամների թվաքանակն է:

Սպառման ագրեգատի հաշվարկում ներառվում են նաև երկարաժամկետ օգտագործման ապրանքների ընթացիկ սպառման հաշվարկային մեծությունը:

### **Աղքատության գծի որոշումը**

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտությունում ՀՀ ԱՎԾ-ն կիրառում է աղքատության երկու գծեր՝ «Աղքատության ընդհանուր գիծը» և «Ծայրահեղ աղքատության գիծը» (կամ պարենային գիծ): Աղքատության ընդհանուր գծի կիրառմամբ որոշվում է աղքատությունը, իսկ ծայրահեղ աղքատություն գծի կիրառմամբ՝ ծայրահեղ աղքատությունը:

Աղքատության ընդհանուր գիծը որոշվում է Ծայրահեղ աղքատության (պարենային) գծի հիման վրա, որի հիմքում սննդի սպառման էներգետիկայի մակարդակն է: Մինչև 2004 թվականը կիրառվող մեթոդաբանությամբ, համաձայն Պարենի և գյուղատնտեսության համաշխարհային կազմակերպության (FAO) առաջարկի, որպես էներգետիկայի նվազագույն մակարդակ վերցվել էր օրական մեկ մարդու համար 2100 կկալ: Միջին եկամտային խմբերում լայն սպառում ունեցող 24 պարենային ապրանքատեսակների (ըստ հետազոտության) միջոցով կառուցվում էր պարենային նվազագույն զամբյուղը, որը համապատասխանում էր էներգետիկայի նշված սահմանաչափին: Պարենային նվազագույն զամբյուղի դրամական արտահայտությունը (հաշվարկված ըստ դրանում ընդգրկված ապրանքատեսակների գների) կազմում էր աղքատության պարենային գիծը:

2004-ից հետո կիրառվող մեթոդաբանությամբ, նվազագույն էներգետիկայի մակարդակը որոշվում է առանձին սեռատարիքային խմբերի համար Առողջապահության համամաշխարհային կազմակերպության (WHO) կողմից առաջարկվող նորմերի միջոցով: Այսպես, Առողջապահության համամաշխարհային կազմակերպությունը սահմանել է (1985թ) մեկ մարդու համար օրական սպառվող էներգետիկայի հետևյալ նվազագույն սահմանանաչափերը՝

- 0-6 տ երեխաներ՝ 1614 կկալ,
- 7-15 տ երեխաներ՝ 2362 կկալ,
- 16-60 տարեկան կանայք՝ 2099 կկալ,
- 16-60 տարեկան տղամարդիկ՝ 2655 կկալ,
- 60 տարեկանից բարձր անձիք՝ 2006 կկալ:

Հայաստանի ժողովրդագրական կազմի դեպքում, օգտագործելով նշված սահմանաչափերը, մեկ միջին բնակչի համար անհրաժեշտ կալորիականության օրական ցուցանիշի գնահատականը ստացվում է 2232 կկալ:

Կալորիականության միջին ցուցանիշը (սահմանաչափը) բազմապատկելով մեկ կալորիայի փաստացի միջին գնով ստացվում է մեկ օրում պարենային ապրանքների (սննդամթերքի) նվազագույն սպառման արժեքը (շուկայական գինը): Վերջինս էլ հենց ծայրահեղ աղքատության գիծն է մեկ մարդու մեկ օրվա հաշվով: Այն բազմապատկելով ամսվա օրերի թվով ստացվում է նվազագույն պարենային զամբյուղի ամսեկան արժեքը՝ Ծայրահեղ աղքատության գիծն ամսեկան մեկ շնչի հաշվով:

Մեկ կալորիայի փաստացի միջին արժեքը ստանալու համար, օգտագործվել է հետազոտությունում ընդգրկված բոլոր տնային տնտեսությունների փաստացի սննդամթերքի համախառն սպառման (գնված, սեփական արտադրությունից կամ նվեր ստացված) շուկայական գնի գնահատականը և այդ սննդամթերքի համախառն կալիորականությունը: Դրանց հարաբերման միջոցով ստացվել է, որ 1 փաստացի սպառված կալորիան 2004թ.-ին Յայաստանում կազմել է միդիան գներով 167.2 դրամ, իսկ միջին գներով՝ 173.7 դրամ: Արդյունքում նվազագույն պարենային զամբյուղի արժեքը (Ծայրահեղ աղքատության գիծը) մեկ շնչի հաշվով ամսեկան կկազմի 11195.7 դրամ ( $2232 \times 0.1672 \times 30$ ) կամ 11631 դրամ ( $2232 \times 0.1737 \times 30$ ), կախված այն բանից, թե հաշվարկներում միջինը կօգտագործվի, թե մեդիանը:

Եթե նկատի ունենանք, որ սպառման ագրեգատը հաշվարկվում է, ոչ թե մեկ բնակչի, այլ մեկ չափահասին համարժեք բնակչի հաշվով, միաժամանակ կիրառվելով մասշտաբից տնտեսման գործակիցը, ապա անհրաժեշտ է ստացված զամբյուղների արժեքները ճշգրտել՝ համադրելի դարձնել հաշվարկված սպառման ագրեգատին: 2004 թվականին կիրառվել է 0.898 գործակիցը, որն իր մեջ ներառում է չափահասի համարժեքության և մասշտաբից տնտեսման գումարային էֆֆեկտը: Այսպիսով, 2004 թվականի համար Ծայրահեղ աղքատության գիծը ստացվում է ամսեկան 12467 դրամ ( $11195.7 / 0.898$ ) մեդիան գներով կամ ամսեկան 12952 դրամ ( $11631 / 0.898$ )՝ միջին գներով:

Հիմք ընդունելով Ծայրահեղ աղքատության գիծը գնահատվում է, ոչ պարենային ապրանքների նվազագույն սպառման մեծությունը և արդյունքում Աղքատության ընդհանուր գիծը: Դրա որոշման համար հայտնի են «Պարենային ծախսերի» (FEM) և Սպառողական զամբյուղի (CBM) մեթոդները<sup>3</sup>: Համաձայն նշված մեթոդների 2004 թվականի համար ոչ պարենային ապրանքների և ծառայությունների մասնաբաժինը Աղքատության ընդհանուր գծի նկատմամբ, գնահատվել է նվազագույնը 35.64 տոկոս, առավելագույնը՝ 43.42 տոկոս:

Այսպիսով, 2004 թվականի համար Ծայրահեղ աղքատության գիծը ընդունվել է հավասար 12467 դրամ, իսկ Աղքատության ընդհանուր գիծը հաշվարկվել է ոչ պարենային ապրանքների նշված նվազագույն մասնաբաժնով և ստացվել է 19373 դրամ ( $=12467 / (1 - 0.3564)$ ):

2005 և հաջորդ տարիների համար Յայաստանում աղքատության և ծայրահեղ աղքատության գծերի որոշման համար կօպտագործվեն 2004 թվականի որոշված գծերը՝ ճշգրտված գնաճով:

	2004	2005
Նվազագույն միջին կկալ	2232	2232
1 կկալ փաստացի միջին գին	0.1737	-
1 կկալ փաստացի մեդիան գին	0.1672	0.1779*
Ծայրահեղ Աղքատության գիծի (ըստ միջինի)	12952.1	-
Ծայրահեղ Աղքատության գիծի (ըստ մեդիանի)	12467.4	13266
Ոչ պարենային ապրանքների մասնաբաժին	35.64	34.61*
Աղքատության ընդհանուր գիծ (ըստ մեդիանի)	19373	20289
Աղքատության ընդհանուր գիծ, օրեկան, ԱՄՆԴ*	1.30	1.50
Աղքատության ընդհանուր գիծ, օրեկան, PPP*	4.7	5.4

\* Հեղինակի հաշվարկներն ու գնահատականներն են, ԱՄՆ դոլարով աղքատության գծի որոշման համար օգտագործվել է 4-րդ եռամսյակի միջին փոխարժեքները: PPP ընդունված է հավասար 3.62:

<sup>3</sup> Մեթոդները մշակվել են Համաշխարհային բանկի կողմից (2002թ).